

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Քիֆիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction du journal arménien „MSCHAK“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԻՐԻ

«Մշակ» վեց ամսվա զինն է, յուլիսի 1-ից մինչև տարվա վերջը ՎՅՑ ռուբլի. մէկ ամսվա-
նը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 ռուբլի,
Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կայտարարութեան ուրիշ բաղադրանքը «ՄՇԱԿ»-ի գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Կայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ջ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Գ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան ոստիկանութեան նոր կազմա-
կերպութիւնը.—Ներքին Տեսչութիւն. Մամուլ.
Նամակ Երևանից. Նամակ Խմբագրութեան. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԱՌՈՒՆ
ԼՈՒՐԵՐ.—ԲՕՍՍԱ.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՅԱՅԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿՈՎԱՍՍԵԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶ- ՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Կովկասեան կառավարապետ իշխան Գո-
լիցինի օրով մշակված խոշոր ծրագիր-
ներից մէկն է կովկասեան ոստիկանու-
թեան բարեփոխման ծրագիրը, որ արդէն
ստացել է Բարձրագոյն հաւանութիւն և
սկսեց զործարկել ներկայ օգոստոսի
1-ից: Ամբողջ կազմակերպութիւնը գլուխ
բերելու համար նշանակված է եօթ ամիս,
մինչև մարտի 1-ը: Ծրագիրը նպատակ ու-
նի բարեկարգութիւն մտցնել նախնադա-
նեան ոստիկանութեան կազմակերպութեան
մէջ և վերջ դնել այն տաղաւորութիւն-
ներին, որոնք մանաւանդ ահագին զար-
գացում ստացան վերջին հինգ-տաս տա-
րիներում:

Ոստիկանութեան նոր կազմը պէտք է
զանազանվի հին կազմից նախ և առաջ իր
պաշտօնանների ծագման և նախապատրաս-
տութեան կողմից: Նոր պաշտօնանները
պէտք է նշանակվեն զինուորական ծառա-
յութիւն սովորած անձերից, օֆիցերներե-
րից, կազակներից և ունենան ռուս ծա-
գում: Այլ առաջ է առնված այն հան-
գամանքը, որ սովոր լինելով զինուորական
հնազանդութեան և պարտաճանաչութեան
ոստիկանութեան նոր պաշտօնանները պէտք
է կարող լինեն զործել ընդհանուր սխտը-
մով միօրինակ և միաժամանակ, երբ զործը
այդ պահանջի: Ներկորդ տեղացի հին
ծառայողները պէտք է պահվեն պաշտօնի
մէջ ժամանակաւորապէս, մինչև կարելի
լինի գտնել բոլոր ազատ տեղերի համար
համապատասխան մարդիկ: Այդ տեղա-
ցիները չը պէտք է խառնվեն նոր պաշտօ-
նանների հետ, այլ պէտք է խմբվեն առան-
ձին տեղերում, որպէս զի հին աւանդու-
թիւնները չը հաղորդվեն նոր զործողներին:
Իւրաքանչիւր նահանգի մէջ նշանակ-
վում է մէկ զինաւոր ոստիկանական տե-
սուէ, ինսպէկտօր, 7—10 օֆիցեր,
11—12 առաջ ուրիւններ, 27—53 կրտսեր
ուրիւններ և 600—1000 ստորին ոստի-
կանական ծառայողներ: Ամբողջ կազմու-
թեան մէջ պէտք է լինի մինչև 5500 անձ:
Պաշտօնաններին կը տրվեն Բերդանի հրա-
ցաններ, իսկ միւս սխտեմի հրացանները
հին ծառայողներից յետ է վերցվեն:

Ներկայ ծրագրով պահանջվում է նոր
ծախս, որ կը հոգացվի Անդրկովկասի ազ-
գաւանութեան վրա դրած առանձին
տուրքից, որի ծանրութիւնը պէտք է ընկ-

նի մեծ մասամբ կալուածատէրերի և
մասնաւոր սեփականութիւն ունեցողնե-
րի վրա:

Նահանգապետները արդէն սկսել են
հրաւիրել ցանկացողներին ստանձնելու նոր
պաշտօնանները: Այդպիսով մտցնելու է մի
բոլորովին նոր կարգ, որի հեռանկարները
կարող են պարզվել զործնական փորձից
յետոյ: Ազգաբնակչութիւնը, որ վաղուց
յոգնել է աւագանութիւնների պատճառով
առաջացած խոշոր վնասներից, շատ զոհ
կը լինի, եթէ նոր կարգը կարողանայ
արդարեւ ապահովել նրան աւագանու-
թիւններից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒՆ

Ներքին Կայսրի բաղադրած ամիսը երկու
անգամ 16 երեւոյց բաղադրած մի հայերէն նա-
ղէս է հրատարակվում «Փիւնիկ» անունով և
այդտեղ ունի «պատուելի» (սա տիտղոս է, որ
Փիւրբայում այժմ յատկացնում են հայ բողո-
քական քարոզիչներին) Գրաճան բացատրում է
թէ ինչ է «կրօնը և ազգասիրութիւնը»: Բոլոր
տարակուսանքներին միանգամայն ընդ միշտ
վերջ տալու համար, նա ասում է թէ «ազգասի-
րութիւնը բնութագրութեան արդիւնք է: Շատ
բարի: Բայց երբ կրօնի մասին խոսում է այդ
կրօնի պաշտօնանը, լինի դա պատուելի, թէ
հայ սուրբ, թէ դերապայծառ, անկարելի է որ
խօսելի նիւթը լինի բնութագրութեան ընդհա-
նուր ոգին, հիմնական գաղափարը, որոնք մի
են ամեն տեղ և պիտի մի լինեն: Անկարելի է
այն, որովհետև կրօնական պաշտօնանայի համար
ամենից առաջ նախ այս կամ այն դաւանու-
թիւնը, այս կամ այն եկեղեցին է և ապա միայն
բնութագրութիւնը: Ձեռք, արարողութիւնը, ինչ-
պէս գիտէք, մարդու ամենահին բնականային
մէկն է, որ միշտ պահանջ է բովանդակութիւնը
միտքը: Եւ այդ բնականաւ, երևի, կարգէ մար-
դու հետ մինչև աշխարհի վերջը: Ներքին
պատուելին ազգասիրութեան գաղափարը շատ
պոմ է կապել բողոքական եկեղեցու հետ: Ահա
նրա փաստաբանութիւնը:

Կրօնը մը որպիսի մարդու և ազգական
ըլլայ այն աստիճան կը զօրացնէ ազգասիրու-
թեան ոգին իր հետեւողներուն մէջ: Ահա-
սարակ կրօնները երկու մասի կրնանք բաժ-
նել. ժողովրդական և բանաստեղծական: Երբ
կրօնը մը բանաստեղծական է, այսինքն,
կրօնի սկզբանց կիրառութիւնը սոսկ բանա-
նային և եպիկոսոսոսաց ձեւերն է, այդ կրօն-
ը բնականաբար տիրապետական դիրք մը կը
բռնէ և անոր իրաւաստութեան տակ ժողովուր-
դը ստրուկ, տղտ և սնապաշտ վիճակ մը կը
ստանայ: Հարկ չէ ըսել թէ այս կացութիւնը
ինչ աստիճան վնասակար և վտանգաւոր է
ազգային կենաց, իսկ միւս կողմէ ժողովրդա-
կան կրօնը մը կը ներշնչէ իր զաւակները
ապատուութեան, յաւաքիմութեան և անկա-
խութեան զգացումներով:

Այդ ընդհանուր դրութիւնից պատուելին անց-
նում է բացարձակ բեկկամի ձևին: Անդու-սա-
սոն ցեղի առաջադիմութիւնը և լատին ցեղի

յետադիմութիւնը աշխարհ է. և պատուելին
հաւատացած է, որ այդ երկուքների միակ պատ-
ճառը կրօնն է: Մոռանալով որ անդու-սա-
սոն ցեղի մէջ կան մեծ բազմութեամբ ժողովուրդ-
ներ, որոնք կաթոլիկ են, պատուելին ասում է,
որ դժբախտութեան միակ հիմքը հին աւանդու-
թիւններն են և սովորութիւններն կարեւորութիւն
տալն է, և որովհետև միայն բողոքականութիւնն
է, որ կարեւորութիւն չէ տալիս այդ հին բանե-
րին, ուստի և նա է միայն, որ լոյս ու առա-
ջադիմութիւն է տարածում մարդկանց մէջ:

Բողոքականութեան տարրուշ հանգաման-
քներն են, ինչպէս բառն իսկ կը յայտնէ, ա-
զատութիւն, խոզարկութիւն, և յառաջդի-
մութիւն: Սա որոշակի ազատական յարա-
նախադրութիւն մըն է ընդդէմ պահպանողական
դաւանքներու, ինչպէս են պապական, օր-
թոքոս և լուսաւորական եկեղեցիներն: Անոր
դիրք միշտ եղած է Աւետարանին զուտ և
կենսական ճշմարտութիւններուն վրայ հա-
ւարտած անպիտան և փեսապար աւելորդա-
պաշտութիւնները յօտել և ժողովուրդները յետ
կոչել կենաց ջուրին հարազատ և անապա-
ղաբարկին:

Այնուհետև բողոքական պատուելին հաւա-
տացնում է, որ թիւրքաց Հայաստանի վերջին
դժբախտութիւնների ժամանակ ոչ ոք բողոքա-
կան հայերի և նրանց քարոզիչների չափ չէ վը-
նասվել: Հետևաբար և ազգասիրութիւնը հենց
ինքը, բողոքականութիւնն է: Տեսնում էք որ-
պիսի մեծ բարերար է մինչև այժմ հայերին ան-
ճանօթ մնացել:

Ուստի, անհերք է թէ բողոքականութիւնը
մեր ազգին մէջ ոչ թէ վնասակար, այլ ընդհա-
կապալը ազգը իր դարաւոր քրոնիկ արթն-
ցելու, միջին և խաւար դարերու կարգ մը
հայրապետաց և վարդապետաց—որոնք մեծ
փառք օտար ազգերու գաւախներ են, ինչպէս
Յոյն և Ասորի—փոխած և ներսած կամայական
վարդապետութիւններ մի կողմ թօթախելու,
Արևմտեան ու յառաջդիմական գաղափարներ
ներշնչելու, ազատ խորհելու և գործելու մար-
դկային բնական իրաւունքը մեզ ստիճանե-
լու, ուսման և գիտութեան յարգել ճանչնե-
լու, մտաւորական զարգացման, ի մի բան
մեզ եւրոպական քաղաքակրթւթեան ազգաց հետ
յարաբերութեան մէջ դնելով դէպ ի կատար-
եան յառաջխաղացող ահագին հոսանքին հետ
խառնելու նպատակաւորող տարբեր մի
եղած է:

Եթէ մենք սկսենք որոնել այս ոգևորված
չառադիմութեան մէջ իրական ճշմարտութեան
հետքեր, ի հարկէ, կը գտնենք մի քանի այդ-
պիսի հետքեր: Միօրինակաւ զարգացելը
թիւրքաց Հայաստանում մի յայտնի դեր կատա-
րել են, մի յայտնի աստիճանով լոյս և կրթու-
թիւն մտցրել են այդ դժբախտ երկրի մէջ: Բայց
թէ բողոքականութիւնը ազգասիրութեան միակ
աղբիւրն է, այդ հարկէ թէ կարողանան հաս-
տատել բոլոր պատուելիներն անգամ, ուր մնա-
նրանցից մի հատը: Զը պէտք է ստանալ ա-
մենազիւաւոր պակասութիւնը. որքան էլ նոր
լինի բողոքականութիւնը, որքան էլ նա իրան
«մաքրված» եկեղեցի անուանէ, բայց նրան էլ
խորթ չէ ֆանատիկոսութիւնը: Կենց իրան հե-
տեղի գլուխը կրօնական մեկնաբանութիւննե-
րով, ընդհանրել նրա մէջ ամեն մի աշխարհային
հասկացողութիւն—ասան ինչ պտուղ է տալիս
բողոքականութիւնը մեր մէջ: Այդ ուղղութիւնը
ամենից առաջ այն հետեանքն ունի, որ հե-
ռացնում է բողոքական հային իր ցեղակից ա-
ղաւաններից, որովհետև ամեն դէպքում բո-
ղոքական պատուելին «Փիւնիկ» յօդուածագրի
նման է, այսինքն բողոքականութեան գերա-
զանցութիւնը հասկացնել է տալիս յարձակվե-
լով միւս եկեղեցիների վրա, ներկայացնելով
այդ եկեղեցիները իբրև կուպալտ, բանասնա-
հաղ և անպիտան: Հրեականութիւն է, որ կրօնական
հին հասկացողութիւններով տոգորված բողոքա-
կան հայը, զուրկ մնալով ընդհանուր կրթութիւնից,
պիտի սովորէ լոկ ձևի, լոկ վարդապետութեան
մէջ որոնել փրկութիւն. ուստի և պիտի իր գե-
րազանցութիւնը ցոյց տայ, ատելով իր հեթա-
նոս աղապակիրն: Եւ սակայն, իւրաքանչիւր դա-
ւանութիւն վերջնական նպատակ պիտի ունենայ
ըրիտունութիւնը իբրև կենդանի, լուսաւոր
զրիտունութիւնը իբրև կենդանի, լուսաւոր
զրիտունութիւնը իբրև կենդանի, լուսաւոր

լուծիւնը ցոյց տալ և ոչ թէ դաւանաբանական
հակաճառութիւններով, որոնք տառնութիւնը
հաւա տալիս ու վրա են անում քրիստոնեայ աշ-
խարհը և բացի պատակտուններից, արևմտահեղ
թշնամութիւններից ոչինչ չեն առաջացրել: Արդ,
միւս է այն իրական գործը, այն երջանկութիւ-
նը, որ մատակարարում է բողոքականութիւնը
հայերին: Զիշը նոյնը, ինչ տալիս է ամեն մի
կրօնական պրոպագանդա. ֆանատիկոսութիւն,
որ անհաշտ ատելութիւն է ծնեցնում, խաւար
միակողմանիութիւն, որ մարդու ուղեղը կա-
պում կաշկանդում է մի յայտնի դաւանական
ձևի վրա: Հայ բողոքական համայնքը, խօսելով
ամենախոշոր մեծամասնութեան մասին, հետո
է մնում իր ազգի, իր հայրենիքի իրական շահե-
րից, որովհետև նրա ականջում ամեն բոլոր
լուծ է տղտ պատուելիին այն խօսքը, թէ այս
աշխարհում հայրենիք չը կայ, թէ պէտք է երկն-
քում պատրաստել օթեկան, հայրենիք: Այս կող-
մից ինչ զանազանութիւն բողոքական և միւս
եկեղեցիների մէջ: Եթէ պրոպագանդան չը լինէր
միմիայն «Տիւրք հնձի» նպատակով, եթէ նա լի-
նէր ճշմարիտ լուսաւորութեան պրոպագանդա,
այն ժամանակ մենք ուրիշ տեսակ պտուղներ
կը տեսնէինք: Ի՞նչ օգուտ, որ մի բողոքական
հայ սովորում է շատ լաւ բացատրել Աստուա-
ծաշունչը, կրօնական վէճեր մղել, բայց մնում
է նոյն տղտ, նախապաշարված ասիացին,
կենցիկ մէջ մի թոյլ, անպատրաստ խեղճութիւն:
Ձեռքաւանդ բողոքականի համար մի Գարվին
նոյն «Նեոն» է, ինչպէս ջերմեւանդ կաթօրիկի
կամ լուսաւորականի համար: Ել ինչպէս պար-
ձենալ, թէ բողոքականութիւնը առաջադիմու-
թեան կրօն է: Մենք, ի հարկէ, ամենայն ուրա-
խութեամբ խոստովանում ենք, որ բողոքական
հայերի մէջ էլ կան փայլուն բացառութիւններ:
զրանք նեղահայեաց պաշտպաններ չեն, որանց
մատչելի են ընդհանուր գաղափարները, իրական
երջանկութեան գաղափարները, որոնց բաց է ա-
նում մեր ժամանակի լուսաւորութիւնը: Եւ եթէ
նկատի ունենանք, որ այդպիսի բացառութիւն-
ներ տալիս են և ուրիշ կրօնական համայնքները,
այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի, որ
առաջադիմութիւնը այս կամ այն կրօնական
սխտեմի անխտափելի հետեանքն է, այլ գի-
տութեան, բազմակողմանի կրթութեան արդիւնք:
Փանատիկոսութիւնը մասնաւոր է, լինի նա բո-
ղոքական, կաթօրիկ թէ լուսաւորական: Արեւմտ,
մի որոնէր կրօնական այս և այն բաժանումը
իրև լուսաւորութեան դրդիչ, որոնցից միայն
լոյս և գիտութիւն, որ ոչինչ դատաւարապէս և
դաւանական խորութիւն չէ ճանաչող, բայց
ունի այն հրաշալի յատկութիւնը, որ եղբայ-
րացնում է հեթանոսներ, հրէային և քրիստոնեա-
յին մի գաղափարի, մի վերջնական նպատակի
—մարդու երջանկութեան ծառայելու համար:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Յուլիսի 24-ին

«Բասարա» է, անա այն բառը, որ օրական
անթիւ անգամ կրկնվում է իւրաքանչիւր երե-
ւանցու բերանում: Բայց ինչ է նշանակում այդ
բառը: Երբ հացազործները—բացառապէս չօ-
րաքի մաշակներ և հալիներ—ուզում են հացի
տակտան բարձրացնել, խօսքերը մէկ արած դա-
զարեցնում են հաց թխելը և կամ թխում են
սովորականի բառորդը, նոյն իսկ դրանից քիչ և
ժողովուրդը մնում է քաղցած: Ահա այդ դրու-
թեան մէջ է մի ամբողջ շաբաթ մեր ժողո-
վուրդը:

Վերցնում էք փող, դնում հաց առնելու: Դի-
մում էք մի հացագործի. խանութի առաջ խմբ-
ված են հարկաւոր մշակներ, ծառաներ, ար-
հեստաւորներ, երեսմաներ և նոյն իսկ կանայք,
որոնք միմեանց հրելով ու աղմուկով հացի են
տպաւոր. դիմում էք մէկ ուրիշի, երբորդի, չորբոր-
դի, ամեն տեղ տեսնում էք նոյնը. վերջապէս,
մի տեղ էլ դուք եք կանգ առնում և հերթի ըս-
պաւոր: Աստուած հերթ համարի. աղաները և
զանազան իւրաւատէրեր ստանում են առանձին
պատրաստած հաց, հեռանում, իսկ ձեզ հետ

հարկաւոր խեղճեր, ժամեր անցնելուց յետոյ, ստանում են պահանջածի կէս քանակութիւն տաք խմոր, բառի բուն նշանակութեամբ: Եւ այս բանը վերջին տարիները այնքան կրկնվել է այնքան սովորական է դարձել, որ այդ չարա- բաստիկ բառը սարսափ է ազդում ժողովրդի վրա: Ելի բառաբան է, ասում են մշակ, ար- հեստաւոր, մեծ, փոքր, և մի շար վերջերած, վաղ են տալիս բազար, թողնելով դործ ու աշխա- տանք, եթէ չեն ուզում սոված մնալ:

Այս անգամ բառաբանը չափից անցաւ, ժո- ղովրդը համբերութիւնից դուրս եկաւ. և խումբ խումբ սկսեցին բողոքել պոլիցիային և քաղա- քային ուսարկային: Աւարական դիմեց պոլիցիա- յին. պոլիցիան խիստ միջոցներ ձեռք առաւ, սկսեց նոյն իսկ ստիպմամբ թիւել տալ հաց: Բայց ի՞նչու. հէնց այս րօպէին էլ հացը քիչ է, և առնողները ժամերով են սպասում: Հացա- գործ մշակները անզուսպ են և սանձարձակ:

Ահա այս առիթով էր այսօրվայ ուսարկայի և քաղաքում եղող 20—25 ձայնաւորներ ժա- նաւոր ժողովը: Մի լաւ եղբակցութիւն, որին եկել էին թէ անցեալ տարվայ ժողովներում և թէ այս տարվայ խորհրդակցութեան ժամանակ, այդ շայն է, որ հացի գինը թանկացնելով՝ եր- բեք հնար չի լինի կանոնաւորել այդ հացը, այլ պէտք է ունենալ ցորեն, բաց թողնել էժան գնով և աղբիւրով աղբիլ չուկայի գների վրա: Հացագործ մշակին ինքը ցորենը դուրս է բե- րում շուկայ, ինքը թանկացնում և այդպիսով պահանջում է հացի տակսան էլ բարձրացնել, ինքնով բառաբանում: Բայց անցեալ տարի, երբ դուրսն էինք փոխաւորութեան և այդ փո- ղերով ցորեն գինը և էժան գնով բաց թողնեց, ոչ միայն հացի տակսան մեղմ պահեց, այլ ևս ցորենի գինը 40 րուբլուց չը բարձրացաւ, այն ինչ սպասում էին, որ 60 րուբլի կը դառնայ, թէ և այս բոլորի համար քաղաքը ցորենի առքի և ծախսի պատճառով մի քանի հարել բուբլի վնաս կրեց: Եւ ահա այսօրվայ ժողովում էլ յարմար գտան այդ ձևը և որոշեցին ամառա- նոցներից դառնալուն պէս ձեռնարկել նոյն բա- նին: Մենք համաձայն եմք, որ այդ ձևը կիշեց- նի օրից օր բարձրացող ցորենի գինը, ինչպէս այդ եղաւ անցեալ տարի, և նրանք, որոնք այժմ թանկացնում են ցորենը, դուրս կը բերեն պա- հած անղերքից: Ա.—Դո

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 29-ին
«Մշակ» 124 համարում պ. Գալուստ Թու- մանեան ս. Սարգիս եկեղեցու հովուի դէմ տրուած և բարձրացնում, որպէս թէ սա նրա կնոջը այնպէս հրել է, որ նա երեք քայլ յետ գնալով՝ քիչ է մնացել որ ընկնի: Պարոնի գրա- ծը բոլորովն անհիմն է: Ահա իրողութիւնը:

Ինչպէս յայտնի է մեր ժողովուրդը յաճախ անհամեմատ և անուայել է պահում իրան եկեղեցու: Ա՛յ կարող է չը զայրանալ տեսնելով, որ գոռալով եկեղեցի են մտնում, հարսի հագուստ- ները քաշքշում են, նրա վրա հրավառ նիւթեր (բէնդին) են անում, անտեղի կատակներ են ա- նում, բարձրաձայն ծիծաղում, հոգևոր երգեցող- լութեան արգելք են լինում և այլն:

Եւ եկեղեցու հովիւը այս պահարակելի անտեղութիւնը տեսնելով, իրաւունք չունի այդ ստանալի մարդկանց յանդիմանել, սաստել, ուղ- դութեան հրաւիրել և ի դէպս անհնազանդու- թեան եկեղեցու դռները մերժել ի բաց:

Ահա այսպէս սովորվեց վարվել ս. Սարգիս եկեղեցու հովիւը ամսին 4-ին, հարսանիքի ժա- մանակ, որովհետեւ իր անհրաժեշտ պարտակա- նութիւնն էր եկեղեցու սրբութիւնը և ամուս- նական սրբազան խորհուրդը պաշտպանել:

Մենք, իբրեւ ակնաստես այս անցքի, Աստու- ծու և խղճի առաջ ճշմարտութեամբ վկայում ենք:

Ա. Աւետիսեանց, Մ. Սաֆրաստեանց,
Մանու. Գ. Ներկեանց

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, յուլիսի 12-ին
Թարիզի Հայուհեաց Բարեգործական Ընկե- րութեան վարչութիւնը Պարսկաստանի Սա- րուար քաղաքի բնակիչ պ. Աւագ Մելիք-Աբրա- համեանցի միջոցով ի նպաստ աղքատաց ստա- ցած է 330 դրան՝ պարսից դրամ, որը հա- զանակել են Շահրուզ քաղաքի մարդասէր հա- յերը:

Վարչութիւնը հրապարակով յայտնում է իր շնորհակալութիւնը յիշեալ գումարը հանգանա- կող անձանց:

Վարչութեան նախագահ՝ Սրբուհի Ամատունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Մովսէլայից Լազարեան ձեռնարանի տեսչի պաշ- տոնակատար պ. Գ. Խաչատրեան հետադրով խնդ- րում է մեզ յայտնել, որ ձեռնարանում ջրանցքի և ուրիշ շինութիւններ կառուցանելու պատճառով, աշակերտների վերադարձը անհնարին է, մինչև արձակուրդի տոմսակներում նշանակած ժամա- նակամիջոցի լրանումը: Ընդունելութիւնները և լրացուցիչ ընտելութիւններ նշանակված են՝ ամ- սիս 12-ին, 13-ին և 14-ին: Պարագմունքները կը սկսվեն օգոստոսի 16-ին:

Մենք կարող ենք հաղորդել հետեւեալ տեղե- կութիւնները Բագուից դէպի Պետրոպոլ շինվող երկաթուղու մասին: Երկաթուղին պատրաստ է Բագուից մինչև Խաչմաղ, և ամեն օր երթնեկում են բանւորական գնացքներ, որոնք ընդունում են ամեն տեսակ ճանապարհորդներ: Երբեմ- նապէս գնացքների մէջ պատահում են ծածկ- ված վարորդներ, իսկ առհասարակ նրանք բաց պարագործներ են: Ղուբա գնալ ցանկացողները իշխում են երկաթուղուց կամ Խաչմաղի և կամ Խաչմաղ կայարանում, որտեղից կառքով գնում են դէպի Ղուբա: Երկու շաբաթից յետոյ երկաթուղու գնացքները պէտք է ընդու- նեն պատուի ծրարներ, իսկ նախկին պատային կայարանները պէտք է փակվեն: Խաչմաղ կայա- րանից դէպի Դեբեդեալ երկաթուղու գին չէ շին- ված միայն 18 վերստ տարածութիւն, այն էլ չուտով պատրաստ կը լինի, և դժուարութիւն կը յարուցանի միայն Սամուր գետի վրա կամուրջի շինութիւնը, որի համար դեռ չեն ստացված բոլոր պատուիրած մասերը:

Վովկասեան Գիւղատեսակական Ընկերութիւնը աւարտել է գիւղատեսակական գործի բե- ների պահեստի շինութիւնը և արդէն ստա- ցել է՝ գործարաններից դանազան տեսակ գիւ- ղատեսակական գործիքներ, որոնց մէջ առաջին տեղն են բռնում գունամանները:

Ներքին գործերի մինիստրութեան մէջ նորից հարց է յարուցված՝ մասնաւոր պրակտիկայով պարագիւր բոլորիցի վարձատրութեան քանա- կութեան մասին: Այդ հարցը առաջարկված է բժշկական դեպարտամենտի ընտելութեան:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ վերջին երկու տարվայ ընթացքում Անդրկովկասում կատարվում էին տաւարի ժանտախտի պա- տուկաստման փորձեր, այդ փորձերը ընդ- հանրապէս աջող հետևանք ունէին: Կառավար- րութիւնը որոշել է նախ քան պատուաստումը ընդհանրացնելը, շարունակել իր փորձերը դանազան տեղերում և ուղարկել է մի ամբողջ յանձնաժողով Չարալիկի նահանգը, Չինաստա- նի սահմանի մօտ, փորձեր անելու: Կաղակների աւաններում: Յանձնաժողովի ղեկավար նշանակ- վել է Վլադիմիր Սիմոնով, որի ծրագրով կատարվեցին փորձեր և Անդրկովկասում:

Մայրաքաղաքի լրագիրների տեսչով, այս տա- րի Պետերբուրգի տեղնօրգիական ինստիտու- տում հրէանք չեն ընդունվի, որովհետեւ ինս- տիտուտում հրէայ ուսանողների տոկոսը նոր- մայից աւելի է:

«Россия» լրագիրը հաղորդում է, որ կառա- վարչական շրջաններում հարց է յարուցված Պետերբուրգի և Ռիգայի մէջ հեռախօսական թել անցկացնելու մասին, ինչպէս այդ գյուղ- թիւն ունի այժմ Պետերբուրգի և Մովսէլայի մէջ:

Հին-ՆԱԽԻՋՆԱՆԻՑ մեզ գրում են. «Նա- խիջանը այս տարի ունեցաւ շերամա-այդե- րորական ցուցահանդէս. այժմ էլ պատրաստ- վում է հացահատիկների տեսակներն ուղարկել Պարիզ 1900 թ. ցուցահանդէսին: Այդ գործը ֆիլոքսերային կամուրջի կողմից յանձնված է և տեղիս գաւառական այգեգործ պ. Տիգրա- նեանցին, որը ամենայն բարեխղճութեամբ և եռանդով աշխատում է:

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Երկար երաշտից և չոր եղանակներից յետոյ վերջապէս յուլիսի 25-ին և 26-ին անձրևներ եկան և մի փոքր կենդանութիւն տուեցին բուսականութեան»:

ԳԵՐԻՔՆԵՐԻՑ մեզ գրում են. «Երբեք չեմք յուլիսի 27-ին, տեղիս սիրողների մասնակցու- թեամբ, պ. Անդրանիկ և տ. Անդրեւ Ներկայացրին Վարաբաղի Աստղագէտը և Միխիլ հարսա- նիքը: Մեր քաղաքում չորս տարի է, որ հայ- կական ներկայացում չէ եղել: Այժմ է խոստո- վանվել, որ մեր դերերգիները շատ են սի- րում թատրոն գնալ. ապացոյց դրան կարող է ծառայել այն փաստը, որ երէկ տեղիս քաղա- քային ակումբում ստեղ գցելու տեղ չը կար:

Թէ և գնեք թանգ էին նշանակված, բայց, այնու- ամենայն, ամենաաղքատ մարդիկ տոմսակ էին վերցրել: Ներկայացումը ընդհանրապէս լաւ անցաւ: Մուտքը, ծախսերը դուրս եկած, 150 րուբլու է հասնում:

ՆԵՐՔԻՆ-ԱՍՏԱՑԻՑ մեզ գրում են. «Վարա- չիլագի գաւառի ցորենի հունձը արդէն սկսվել է: Դարեան սկզբներում ցանքը արնպէս աջող էր բուսել, որ գիւղացիները հիացած չը գի- տէին ինչ կերպ արտադրանք իրանց ուրա- խութիւնը: Բայց երկար չը տևեց գիւղացու- այդ ուրախութիւնը: Նրկիները անողք էր այս տարի: Ո՛չ բաղմաթիւ ժողովրդի լացն ու կո- ծը, ոչ դանազան անձրևատու սուրբերը և ոչ հողոր հայրերի ջերմեանը հսկումները չը կա- ռողացան ժամանակին անձրև բերել, ու բաղ- մաթիւ սովատանջ գիւղացիները արին քրտին- քը բնութեան քմահաճոքին դո՛ս գնաց: Մայի- սի մի քանի անգամ տեղացող անձրևներից փարթամացած արտերը վերջերս սալարել են ու դեղնել: Կայուն հետևանքներն էլ չեն կա- ռող ընդհանրապէս, քանի որ արդէն ժա- մանակն անցել է: Մեծ մասամբ արտերը այս տարի ոչ գերանդի է մտնում և ոչ մանդաղ. մի քանի տեղերում ճարահատեալ գիւղացիները դժոխային տանջանքով արմատահան են անում չորացած արտերի թղաչափ ցորենը... Աւելի ծանր է կենդանիների վիճակը. խոտ չը կայ- դաշտերը և սարերը մերկ են, բառիս բուն նշա- նակութեամբ: Դարման նոյնպէս չը կայ, որով- հետև հացը վնասված են: Աւելի անտանելի է ջրի պակասութիւնը: Սակաւաձին ձեռքը և չորային ամառը այն աստիճան ծարաւեցրել են երկիրը, որ մի քանի տեղերում աղբիւ- րներ և առուակներ բոլորովն ցամաքել են: մանաւանդ մեր Ներքին-Աստա գիւղում ջրի չը անուշամբ պակասութիւն է զգացվում: Գիւղի անասուններին ջուր տուող միակ ա- ռուակը արդէն մի ամիս է, որ ցամաքել է: Գիւղացիները ջուր վերցնում են այժմ գիւղից 3 վերստ հեռավորութեամբ Հրազդան գետից: Այս է պատճառը, որ այժմ կենդանիները՝ մա- նաւանդ ոչխարը և գաւը շատ էժան են ծախ- վում: Ընդհանրապէս ժողովուրդը մռայլ տրա- մադրութեան մէջ է: Ուրախ են միայն մի քա- նի վաշխառուներ, որոնք նայում են իրանց լի- քը ամբարներին և երկրի կապտութեանն ու դժոխային հրճուանքով լցվում:

Գանձակի գաւառի ՀԱՅԻՔԵՆԻ գիւղից մեզ գրում են. «Մայիսի 20-ին, Հայրէջնից, Խա- պակասի տան փողովի ու նեղիկ պատշգամ- բում, մեր մամուլի մէջ մի քանի անգամ փա- ւաքանված Խաբաղեանը, սիրողների մասնակ- ցութեամբ, ներկայացրեց՝ 1) «Ներայը և քոյը» պիէսի վերջին երեք պատկերներ, հեղ. Գու- նիայի, և 2) «Ճարահատեալ դերասան» վոդվի- լը: Ներկայացման վերջը Խաբաղեանը երգեց «Ներայը»: Մի կողմ թողնելով «Ներայը և քոյը» պիէսի անգեղարուեստականութիւնը և անձուռնի թարգմանութիւնը, (թարգ. ոչ- կովիկ Տէր-Ղաւթեանի), այդքան միայն կա- սենք, որ Խաբաղեանը, ինչպէս և միւս ան- գաններին, այս անգամ էլ ցոյց տուեց իր անհնորճութիւնը բեմական արուեստի մէջ: Մեր առաջ արտիստ չէր (ինչպէս ինքն իրան հի- նուանում է Խաբաղեանը), այլ մի խելկատակ, որ տեղի-անտեղի շուտ-շուտ չուտ էր իր աչ- քերը, ծռւում ու վախեցնում հանդիսական- ներին, ամեն մի անշանա խօսք արտասանում էր երգելով և իր խղված ձայնին աշխատում էր մի տեսակ հանդիսաւոր տրագիկոմ տալ: Ապա «Ճարահատեալ դերասան» վոդվիլից յետոյ, Խա- րաղեանը երգեց «Ներայը» պիւսիդակ ճիւղ ու աղաղակով, աղաւաղված ձօնովով և վայրենի շարժումներով: Մեր կարծիքով, Խաբաղեանի համար նոյն իսկ մեծ խելագարութիւն էր «Նե- րայը» երգելը: Աստուծոյ ողորմութեամբ թատ- րոնը բաւական ամայի էր և հանդիսականների թիւն էր երկու ջուրիս ու մի կէնտ: Նպատակ չուներալով ընթերցողներին զբաղեցնել մի ան- նշան դերասանի խաղով, թոյլ ենք տալիս մեզ, ի պաշտպանութիւն դեղարուեստի, հրապարա- կով յանդիմանելու Խաբաղեանին այն քանի հա- մար, որ նա իր տափակ և անհնորճ խաղով ծաղրել է մասնում հայոց բեմը և մեր թատ- րոնի վարկը վայր է գցում թէ Թիֆլիսում և թէ գաւառներում: Ահա հէնց դրա նմանների չնորհն է, որ այսօր հայ ժողովուրդը բնութ- րութիւն պարը և ցրիկի կոտորների խելկատա- կութիւնները անելի վեր է դառնում, քան թէ թատրոնը: Մեր անկեղծ և բարեկամական խոր- հուրդն է, որ Խաբաղեանը ձեռք վերցնի մեր թատրոնից և որոնք իր համար գործունէու-

թեան մի ուրիշ ասպարէզ, որովհետեւ «Խոչկա- կարի բանը չէ կարկանդակ թխելը»:

Ջերբայի գաւառի ԱՌԱՔԵՆԻ գիւղից գրում են մեզ. «Յուլիսի 27-ին հետեալ դէպքը տեղի տւեցաւ մեր գիւղում: Մի ամառակամ կին ծննդաբերական ցանք է գզում. անցնում է 2—3 ժամ, բայց նա չէ աղաւովում: Ցանցերը, ցանկանալով գործը շուտ վերջացնել, կանչում են «ղալլալին», որը գոռում գոչւնում հեռացնե- լով հիւանդի ազդականներին, սկսում է սրա- գործութիւն իր անդրբեհեղեղան ամենով: Նրան օգնում է գիւղի այժարածը, որպէս գոր- ծին հմուտ մարդ (նա հմուտութիւն ձեռք էր բե- րել այժմ աղաւելով): Մի քիչ աշխատելուց յետոյ, սրագործները յետ են քաշվում, թողնե- լով ծննդականի անչնչացած դիակը: Սկսվում է սովորական վայնասունը: «Ճակատին այդ էր գրված», արդարացում էր գիւղը իր սիրելի «ղալլալին»: Փանի քանի թշուառներ այդպիսով դո՛ս են գնում գիւղական «ղալլալների» թունա- ւոր ամենիներին... Ձօներ շատ են լինում և չէ կարելի ասել, թէ բոլիչ չը լինելու պատճառով է: Հաղորդ գիւղում կան բժիշկներ և մանկա- բարձուհի, Ջերբայիում կան բժիշկներ, որոնք չեն մերժում հրաւիրողներին: Իսկ հրաւիրողներ կան արեօք: Շատ քիչ Գիւղացին իր մանկու- թիւնից «ղալլալներ» է ձանաչում ու նեղն ընկած տեղը նրան է ձեռք մեկնում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ջանգիբաբի սուլթան Սայիդ-բէն-Կալինի մայրը՝ Լիլի-Սար, գնացել է Գերմանիա՝ Վիլ- հելմ կայսրին խնդրելու, որպէս զի նա աշակցի իր որդուն, որին արտաքսել են անդլիացիք, նորից ստանձնելու: Ջանգիբաբի դահը:

—Երեւոյի գործակալութեան հետադրում են Պէկինից, որ խաղական դեսպան յայտնել է երէկ ցունդ-լի-եամէնին, որ Խաղախ ցանկանում է Չինաստանի հետ պահպանել ա- մենապարտական յարաբերութիւններ: Խաղա- կան կառավարութիւնը մօտ ժամանակներում մի քանի առաջարկութիւններ է անելու, որոնք եթէ ընդունվեն Չինաստանի կողմից, այն ժա- մանակ Սան-Մունի առիթով եղած բոլոր տարա- ձայնութիւնները այնու եղ կը ստանան: Բայց, — աւելացնում է թղթակիցը,—այստեղ չէ՛ թէ այդ ինչ առաջարկութիւններ են: Օճուղ-լի-եամէնը որպէս թէ պատասխանել է, թէ Չինաստանը չի ընդունի ոչ մի առաջարկութիւն, որը չօշափե- լիս լինի նրա պատիւը և իրաւունքները:

—Եթէ հաւատանք անգլիական լրագիրների լուրերին, չինական Վիա-Չու գաւառի աղա- ընականութիւնը խիստ զրգուլած է այն բանի դէմ, որ գերմանացիներին թոյլատրված է այնտեղով երկաթուղու գին անցկացնել: Շատ հաւանական է, որ Գերմանիան իր զաղովթները պաշտպանե- լու համար ոյժի դիմի և այդպիսով, ինչպէս և միշտ, իր զաղովթների սահմանները լայնացնու:

—Չինուորական դատարանների պահանջի հա- մաձայն, «Matin» լրագրի խմբագրութիւնը յանձ- նեց նրանց Էստէրհասի իսկական նամակը, որը գրված է 1899 թ.ի մայիսի 23-ից և որի մէջ նա խոստովանում է, որ 1894 թ.ի բողոք- բոյի հեղինակը ինքն է: Բացի դրանից, խմբագ- րութիւնը յանձնել է դատարաններին և Էստէր- հասի այն յօդուածը, որի մէջ խոստում է Բուա- դէֆրի և Գոնզի յարաբերութիւնների մասին, և որը «Matin»-ում լոյս էր տեսել «Boisdeffre ac- cuse par Esterhas» վերնագրով: Ճաղով այդ զօկուսները զինուորական պաշտօնական, «Matin»-ի ներկայացուցիչը դրեց սեղանի վրա նաեւ բողոքների ֆակսիմիլը: Չինուորական պաշտօնեան տեսնելով այդ երեք դօկումենտնե- րը և նրանք ձեռքի նմանութիւնը, չը կարողա- ցաւ զսպել իր զարմանքը:

—«Daily News» լրագիրը հաղորդում է իբր լուր, թէ Դէկասէ, Պետերբուրգի վերադառնա- լիս, կայցելել Բերլին: Պիթակիցը ասում է, որ երկակայն անգամ չէ կարելի, թէ ինչպէս Փե- րանսիական արտաքին գործերի մինիստրը զանց արեց մի այդպիսի քաղաքավարական քայլ, այն էլ այն ժամանակ, երբ Վիլհելմ կայսրը այցելու- թեան գնաց Փրանսիական «Iphigénie» նաւին: Շատ կարելի է,—աւելացնում է թղթակիցը,— որ Վիլհելմ կայսրը իմանալով, թէ Դէկասէ պէտք է փոխայցելութիւն տայ կոմս Մուրա- վիկին, ինքն էլ դիտմամբ այցելեց «Iphigénie» նաւը, որ Դէկասէին ուրիշ եղ չը մնայ, բացի Բերլին այցելելուց:

—Անգլիական լրագիրները հաւատացնում են, թէ Դէկասէի Պետերբուրգ գնալը քաղաքական նշանակութիւն ունի: «Standard» պնդում է, թէ Դէկասէի ճանապարհորդութեան նպատակն է դաշնագրութիւն կապել Անգլիայի դէմ: «Times» լրագիրը հերքում է մի այդպիսի նպատակ և ասում է, որ Փրանսիական և ռուսաց արտա- ըրն գործերի մինիստրների մէջ տեղի ունենալից խօսակցութեան առարկան կը լինի ասիական և աֆրիկական երկիրները քաղաքակիրթ պետու- թիւնների մէջ բաժանելու հարցը:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օրերնորթարանական հետազոտութիւններով պարագործները գուշակում են, որ յուլիսի կէսը և ամբողջ օգոստոսը տօթային պիտի լինեն:

Յետաքրքրական է, որ այս տարի Ռուսաստանի հիւսիսում ցրտեր են տիրապետում:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍՏ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

30 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Օրենսդրութիւնների ժողովածու» մէջ հրատարակված է հաւատարիմ հպատակութեան երկրան նոր ձևը:

ԲԼԵՆ: Ձիւնուորական ուսուարանի անդամները այսօրվայ նիստում մեծ ուշադրութեամբ էին հետևում բացառութիւններին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակված է Բարձրագոյն հրաման զինուորագրութեան ենթակարգութեան բարձրագոյն դպրոցների այն ուսանողներին, որոնք հետագայում մեծ դպրոցներից խմբովին անկարգութիւն անելու համար Այդ միջոցի ժամանակաւոր կանոնները թողնուած են տասը յօդուածից, որոնցից երկուսը հետևեալներն են.

Յօդ. 1. Բարձրագոյն դպրոցների ուսանողները, խմբովին անկարգութիւններ անելու համար զրկւողներում կամ դրանցից զուտ, զրկուելու համար այդպիսի անկարգութիւններ անելու, կամ ուսումնարանական պարագործներին խուսափելու համար կը հետադարձնուի դպրոցներից և կը մտնեն ինքնուրուշ շարքը:

Յօդ. 2. Վերոյիշեալ յօդուածում մատնացոյց արված յանցանքների վերաբերեալ դործերը ընկնելու համար, իրաքանչիւր բարձրագոյն դպրոցում հիմնվում է մի առանձին խորհրդակցութիւն, բաղկացած նախագահից և ժանկարգութեան ժողովի անդամներից, որին դպրոցի կանոնադրութեամբ կարգապահական իշխանութիւն է տրված, և զինուորական, ներքին գործերի և արդարադատութեան մինիստրների ներկայացուցիչները:

«ՇԵՏԵ» լրագիրը հաղորդում է Ս. Ի. Մամոնովի սնանկութեան մասին Մոսկվայում, որ հաւանօքէն աղղրեցութիւն կը գործի Մոսկվա-Նաբուլայեան երկաթուղու ակցիաների վրա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վէլիկաե վերադարձաւ այստեղ կէսօրից յետ Վալդէկ-Րուսսօ ընդունեց նրան երեկոյան: Վալդէկի հիւանդանոցում է Բամբուլի, որ կը նախաձայնէ Լուբէի մօտ:

ԼԻՍԱԲՈՆ: Պաշտօնապէս հաղորդում է, որ Օպերատու վերջին երկու ամսովը ընթացքում նկատված են կասկածելի հիւանդութեան մի բանի գէպեր:

ԲԵԼԳՐԱՎ: Ալեքսանդր թագաւորը, Միլանը և բոլոր միջնաւորները գնացին Նիշ Լուբերկին նայելով սկուպչիկան անյապաղ կը գուժարվի:

Թիւն չունի և բացատրվում է միայն միմիստրների հիւանդութեամբ:

ՄԱՌԻԻ: Հրատարակված է զինուորական բարձրագոյն դատարանի դատաւճիռը Սանտ-Նասոն անձնատուր լինելու մասին: Բոլոր գնեւերակները և հրամանատար օֆիցէրները արդարաւորված են:

31 յուլիսի

ԲՈՊԵՆ: Այսօր, ներկայութեամբ Թագաւոր Այսպրի, Թագաւորանդի և Մեծ Իշխանների տեղի ունեցաւ պատերազմական թիւղանօթաձգութիւն զօրախորով: Թագաւոր Այսպրը, Թագաւորանդին, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչի և յունաց արքայորդի Նիկոլայի հետ, ժամանեց առաւօտեան 8 1/2 ժամին Բալչա: Թագաւորանդին թիւղանօթաձգութիւնից յետոյ Բալչայի պալատում տեղի ունեցաւ Բարձրագոյն նախաձայնի: Նախաձայնիկից յետոյ, ցերեկվայ ժամի 2-ին, Թագաւոր Այսպրը, Թագաւորանդը, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչը և յունաց արքայորդի Նիկոլայ մեկնեցին կառքերով Նովի-Պետրօֆ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յուլիսի 31-ին, գիշերվայ ժամի տասնեակում, Պետերբուրգ-Վարշավեան երկաթուղուց 428 վերստ հեռավորութեան վրա, Անտոպոլ և Բէֆիցա կայարանների մէջտեղ ՁԵ 12 արագընթաց գնացքը, որ գնում էր Վերմբորձից Պետերբուրգ, դուրս եկաւ գծից, որի ժամանակ շնամկեցին բրիտանական հպատակ Նակով Սամուէլ և չորս ճանապարհորդ: Ինչպէս հաղորդում են անցքի տեղից՝ խորտակման պատճառ եղել է Բէֆի կտորվելու Վնսովաներին օգնութիւն հասցրին կին-բժիշկը, որը գտնվում էր այդ գնացքում, և ուրիշ բժիշկներ, որոնք եկան Դվինսկից և Կորսովկից: Կատարվում է ըննութիւն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Հաւաքի գործակալութիւնը» հաղորդում է մեծ թւով ձերբակալութիւնների մասին, որ տեղի է ունեցել երիտասարդ արքայականներին, հայրենասէրներին լիզայի և հակառակդատական միութեան խմբերի մէջ: Քննութիւն է սկսված բրեսկան օրէնքների 89 յօդուածի համաձայն, որի մէջ խօսվում է դատարանական մասին, պետութեան ձեռք բռնելու նպատակով: Հաղորդարարութեան մէջ ապա ասված է, որ Նիլսոնը դատաւորներին դատելու ժամանակ ուշադրութիւն էր դարձրել միայն այն փաստերի վրա, որոնք կապ ունէին այդ փորձի հետ, բայց դրանից յետոյ կատարված խուզարկութիւններից պարզվեց, որ զոյրութիւն չունի մի դատաւորութիւն, որ կազմակերպված է եղել դեռ 1898 թվ յուլիսին, և որի նպատակն էր ոյժի միջոցով ձեռք գցել կառավարութեան ղեկը: Գտնվել են հետադիւրներ, որոնք ոչ մի կասկած չեն թողնում դատարանական գոյութեան մասին և թէ ուղբեր են նրա զլխաւոր հեղինակները: Կազմակերպված էր խիստ նախադրութիւն, որը ցոյց տուեց, որ մի և նոյն խմբերը պատրաստվելիս են եղել նոր փորձ անելու ամենամօտ ժամանակները: այդ պատճառով ձեռք առնվեցին անմիջապէս միջոցներ, որպէս զի նոր անկարգութիւնների առաջն առնվի: Քննութիւնը յանձնված է Պալլերին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վերսուէլ ձերբակալվեց իր բնակարանում առաւօտեան 4 ժամին: Ձերբակալութիւնը կատարվեց 15 ժանդարմների միջոցով: Վերսուէլին Պալլեր տարան կառքով: Բացի դրանից, առաւօտեան ձերբակալվեցին հակահրէական լիզայի նախագահ Գերէն և հայրենասէրների լիզայի անդամներ Բարիլի և Բալիլեր:

ԲԵՆ: Առաւօտվայ ժամի 5 1/2-ից լիցի շուրջը սկսվեց մեծ կենդանութիւն: Նացիօնալիստները, ի պատիւ զօրքի աղաղակներով էին դիմաւորում գնեւերակներին, որոնք գնում էին դատարան: Հրապարակական նիստը սկսվեց 6 ժամ 30 րոպէսին: Դահլիճը լիքն է և կենդանութիւն է տրուում Դրէյֆուս մասնում է սովորական զինուորական քայլուածքով: Բոլոր հանդիսականները նայում են նրան մեծ հետաքրքրութեամբ: Նախագահը հարցնում է նրան բորդէրօի պատճէնի մասին, որը գտել են նրա գրպանում: Նա պատասխանում է, որ կամենում էր պահել իրը յիշատակ բորդէրօի բնագիրը, որի մասին իմացաւ միայն զինուորական դատաւորանի ժամանակ: Դէլարատ Վերսեց ցուցնում էր տարին 1894 թվ յունվարի 21-ից ուղարկված հեռագրի աւելում: Կազմիւր Պէրէլ ցոյց է տալիս. «Ես չը գիտեմ ոչինչ այնպիսի մի բան, որի մասին պէտք լինէր լսել և զիտեմ միայն այն, ինչ որ արդէն տեսել եմ: Նա կրկնում է 1898 թվ դեկտեմբերի 28-ին վճարեկ դատարանի առաջ իր տուած ցուցմունքը թէ գերմանական ղեկավարը գիտէ իրան Հօհենլոյի նամակով, որի մէջ Հօհենլոյ պահանջում էր, որ Ֆրանսիական կառավարութիւնը հերքէ գերմանական ղեկավարի

մասնակցութիւնը Դրէյֆուսի գործում: Ապա Պէրէլ ասում է, որ նա ամենին տեսակցութիւն չէ ունեցել Դրէյֆուսի ազգականների հետ նրա գործի վերաբերմամբ: Վալդէկ-Րուսսօ և Բլյակ միակ անձնաւորութիւններն էին, որոնք ինդրեցին իրան միջամտել, որպէս զի գործի ընթացքին հրապարակական լինի: Պէրէլ ակեղացում է, բարձրացնելով ձայնը. «Ի պատիւ այն պաշտօնի, որը ես գրաւած ունէի, ի պատիւ հանրապետութեան, ես թող չեմ տայ ասել, որ հանրապետութեան նախագահը աղիւ խօսք է փոխանակել Ֆրանսիական մի կապիտանի հետ, որը մեղադրվում է դաւաճանութեան մէջ: Վկան ակեղացում է, որ գերմանական ղեկավարի հետ տեղի ունեցած միջնադէպը ոչ մի դեր չէ խաղացել իր հրաժարականի մէջ: Նա յայտնում է, որ dossier-ի հետ նա ծանօթացել է միայն Դրէյֆուսին դատաւարանից տասնչորս օրից յետոյ: Խօսելով գերմանական ղեկավարի հետ տեղի ունեցած միջնադէպի մասին, նա նկատում է. «Ես միշտ այն համոզմունքն եմ ունեցել, թէ Պրանսիան ազատ է իր վճիռների մէջ և միմիայն կարող է ունի իրանից: Պէրէլ վերջացրեց իր ցուցմունքը յայտնելով, թէ Մերսիէ խօսեց իր հետ Դրէյֆուսի խոստովանութեան մասին միայն Լէբրէն Բէնի հետ իր տեսակցութիւնից յետոյ, իսկ մինիստրների խորհրդում նրա մասին խօսեց միայն 4—5 օրից յետոյ: Պէրէլի ցուցմունքը մեծ տպաւորութիւն գործեց: Սեանդով և յուզված ձայնով Պէրէլ բողբոլում է Դրէյֆուսի նամակների դէմ, որոնք մէջ ասված է, թէ 1894 թվին նախագահը պարտաւորութիւն էր յանձն առել նրա գործի ընթացքին հրապարակական անել տալու մասին: Դրէյֆուս յայտնում է, որ այդ նամակները յեղաշրջված են: Պէրէլ երբեք յանձն չէ առել ոչ մի պարտաւորութիւն: Պէրէլ խնդրեց համաձայն նախագահը ասում է, որ այդ նամակների կը գտնվեն Սկովինի և Մերսիէի հարցաւ փորձը: Դիմանալով 1894 թվին—ասում է Մերսիէ—որ Եվարցիօպէն պարագում է լըրտեսութեամբ, ինքը, արտաքին գործերի մինիստրի միջոցով, նկատողութիւն արեց այդ մասին գերմանական ղեկավարութեան և կրկնապատկեց հակողութիւնը տեղեկատու պաշտօնականների միջոցով: Դատարանը լսում է Եվարցիօպէնի նամակը այն բանի մասին, թէ նա երկրորդ քննութեամբ ձերբակալում էր, և Պանիցարդիի նամակը չառ նրանի մասին, որ նա կարող է հաղորդել շատ հետաքրքրի բաներ: Մերսիէ ասում է, որ հրամանագրեց այդ առիթով ընտրութիւն կատարել: Նա ակեղացում է, թէ գերմանական ղեկավարան կից նշանակված մշտական գործակալը բորդէրօ բերեց 1894 թվ սեպտեմբերի 20-ին կամ 21-ին: Մերսիէ նախադրեց զարգեց Պէրէլին և ապա Դիւպիլիին, որի հետ և վճռեց գործել մեծ զուշութեամբ և այդ պատճառով էլ այդ բանը չը յայտնեց մինիստրների խորհրդին անմիջապէս: Մերսիէ յայտնում է, որ Դրէյֆուսի վրա սովորութիւնը մնալի նրա ձերբակալութիւնը և դատաւարանական ընտրութիւն նշանակել մինիստրների խորհրդում վճռվեց միաձայն: Մերսիէ խօսում է Պանիցարդիի նամակի առիթով և յայտնում է, որ բարձրացնելով ձայնը, թէ չէր հրամանագրել Դրէյֆուսին թանաքել, եթէ համոզված չէ իրենը նրա յանցաւորութեան մէջ: Նա ակեղացում է, որ վճռաբեկ դատարանի առաջ հրաժարվեց պատասխան տալու զինուորական դատարանին ներկայացրած «Այդ սրիկայ Դ» խօսքերը պարունակող դօկումենտի առիթով, բայց այժմ նա պատճառ չունի լուելու: Հասկանալու համար, թէ ինչ է կատարված, պէտք է իմանալ այն ժամանակվայ թաղաքական դրութիւնը: (Ուշադրութեան շարժումներ): Միշտ էլ կէս գիշեր մնաց ինքն, Մերսիէ, Դիւպիլիի մօտ Նիլսոնան պալատում, սպասելով այն հեռագրիների հաղորդութեան, որոնք փոխանակվում էին Վիլհելմ կայսրի և կոմս Միլստերի մէջ, ինքն իրան հարց տալով, թէ արդեօք այդ բանը պատրաստվում էր վերջանով, թէ խաղաղութեամբ: (Սաստիկ յուզմունք): Դրութիւնը շատ լուրջ էր: Միլստերը հրաման էր սպասում, որ պահանջէ իր անցագրերը: (Նրկարատն շարժումներ): Մերսիէ իր կողմից հրամանագրեց Բուադէֆրին և ուրիշ օֆիցէրներին պատրաստվել սպանադիմութեան: Մերսիէ մեր ոտների տակ ականներ էինը գզում, —ասում է նա,—մենք պէտք է գործ դնէինք ամեն տեսակ միջոցներ, որպէս զի խուսափէինք պատերազմից. միւս կողմից չէր կարելի զինուորական դատարանի անդամներին թողնել անյայտութեան մէջ գաղտնի դօկումենտների վերաբերմամբ: Քննելով բորդէրօի մէջ յիշատակված դօկումենտները, Մերսիէ ասում է. «Այդ դօկումենտները յանձնել է Դրէյֆուս և ուրիշ ոչ ոք: Եթէ ես ամենափոքր կասկած անդամ ունե-

նայի, ես Դրէյֆուսին անմեղ կը յայտարարեմ: Դրէյֆուս սպառնական հայեացքով և բարձրացրած բռնեցքով դէպի Մերսիէ, բացականչում է. «Չէնց այդ պէտք է յայտարարեմ: Դուք (Սաստիկ յուզմունք): Մերսիէ վերջացնում է հետեւալ խօսքերով. «Չը նայելով ծանօթ գումարներին, Դրէյֆուս յանցաւորութեան մասին իմ համոզմունքը սաստկացաւ: Կազմիւր Պէրէլ պահանջում է, որ նրան նորից հարց ու փորձի ենթարկեն և այն էլ երես առ երես Մերսիէի հետ: (Մափաւարութիւններ): Նիստը փակված է: Դրէյֆուս դուրս է գալիս: Նա շատ յուզված տեսք ունի: Ներկայ եղողների մի մասը շուացնում էր Մերսիէին, երբ նա հեռացաւ վանդակի մօտից: Յաջորդ նիստը նշանակված է երկուշաբթի:

1 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մեծ Իշխան Վալդիմիր Ալեքսանդրովիչ նշանակվում է Նիկոլայեւեան ինժինէրական ակադեմիայի պատուաւոր անդամ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բացի Դերուէլից ձերբակալված են նաև տասն հինգ մարդ, որոնց թւում Մարսել Դաբէր, Դէմոնիկուր և Բոյալիստական կոմիտէները: Դրէյֆուսի փորձը: Դրէյֆուս ձերբակալութեան լուրը ճիշդ չէ: Դրէյֆուս փակվեց հակառակդատական լիզայի բնակարանում, Եւարցիօպէս վրա, քառասուն զինուորական կամեններով, որոնք վճռել են պաշտպանել: Հայրենասէրների լիզայի օրդանը դատաւարանական ընտրութեան է ենթարկված՝ զինուորների մէջ կառավարութեան ձեռք մասին պէրտտիտ առաջացնելու փորձի համար: Մայլէր դեմեքարի (Սէն-Սիբան դպրոցի դիւքեօրի) որդին, ձերբակալվեց, որպէս քարտուղար այդ լրագրի և որպէս մասնակից դատաւորութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ձեռք են առնված միջոցներ՝ թող չը տալու Դերէյնի յարաբերութիւն ունենալու արտաքին աշխարհի հետ: Կտրված են ջրանցքը և հեռախօսը. այնտեղ չեն թող տալիս ուտելիչներ տանել: Ոստիկանութիւնը կը սպասի մինչև որ Դերէյն անձնատուր լինի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ձերբակալվածները մէջ գտնվում են՝ Բիւֆֆէ, Բէլվէլէր, դը-Ենկլին, հակառակդատական լիզայի ընդհանուր բարուդար Փերար: Բիւֆֆէ կառնաւորվեց բեղիկական սանձանք անցնելու քուէին: Հակառակդատական լիզայի նախագահ Դերէյն սպառնում էր, որ հրացանադակ կանի ոստիկաններին, որոնց պատուիրված էր նրան կալանաւորել: Նրանք էլ թողին նրան, բայց փակեցին չորս կողմի և չըրպապտեցին տունը, սպասելով մինչև որ նա ինքը անձնատուր լինի: Դատաւարանական ընտիչ Պալլեր սկսեց Դերուէլի և ուրիշ բանտարկվածներին հարց ու փորձի ենթարկել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բանտարկվածների պաշտօնական իրււր հաշւում է ինը, բայց ձեռք առած միջոցները հարկադրում են մտածել, որ այդ թիւը աւելի մեծ կը լինի:

ԲԵՆ: Ամբոխը աղմուկ բարձրացրեց Լիցէի շուրջը, երբ դատաւորները ցրվում էին: Մերսիէին դիմաւորում էին զանազան աղաղակներով. մի քանիսը գոչում էին. «Կեցցէ զօրքը, կեցցէ Մերսիէ: Ուրիշները—«կորչեն եղևութները, կեցցէ արդարադատութիւնը: Ձերբակալվեց մի մարդ, որ աղաղակում էր. «մարդասպան, մարդասպան: Վերջապէս միջամտեցին ժանդարմները և քշեցին ցոյց անողներին, որոնք ցրվեցին քաղաքում, շարունակելով մի փոքր ժամանակ ևս աղաղակել: Դրէյֆուս վերադարձաւ բանտը անուամբ միջնադէպի:

2 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ի նկատի առնելով, որ «Сынъ Отечества» լրագիրը շարունակում է իր շնատակար ուղղութիւնը և թող է տուել իր 202-դ համարի «Սթոմովի խառնակութիւնները» յօդուածում խախտել մամուլի գործերի զլխաւոր վարչութեան 1896 թվ յունիսի 8-ի և 1897 թվ յունվարի 4-ի կարգադրութիւնները, ներքին գործերի մինիստրը որոշեց՝ դադարեցնել թերթի հրատարակութիւնը երկու ամսով:

Ի նկատի ունենալով, որ «Нижгородский Листокъ» թերթը խախտել է մամուլի գործերի զլխաւոր վարչութեան 1896 թվ յունիսի 8-ի և 1897 թվ յունվարի 4-ի կարգադրութիւնները, ներքին գործերի մինիստրը որոշեց՝ դադարեցնել թերթի հրատարակութիւնը երկու ամսով:

ԿԻԷՎ: Համալսարանական հանդիսարանում բացվեց XI-դ հնագիտական ժողովը: Նկեկ են հիւրեր պաւսական երկիրներից: Ձէխիայից, Բուդապեստայի և ուրիշ տեղերից: Տոմսակներ տրված են մօտ 500:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հակալեւաբանական թերթերը խուստովանում են, որ Մերսիէ նոր փաստ չը բերեց, բայց հարցի տեսնելքական ընտրութիւնը համարում են ճնշող Դրէյֆուսի համար: Վերա-

ընդհանուր օրգանները յայտնում են, թէ Մերսիէ
բաւականացաւ միայն հաղորդելով այն բոլոր
առեկօսէները, որոնք արդէն տպւած էին լրա-
գիրներում և թէ նա պահում էր իրան ոչ այն-
քան իբրև Իրէյֆուսին մեղադրող, որքան իբրև
մի մարդ, որ աշխատում է իր սեփական պաշտ-
պանութեան մասին: Պահպանողականները և
չափաւորները ասում են, թէ երէկ ձեռք առն-
ված միջոցները նպատակաւ չեն լինի Իրէյֆու-
սի դործի համար, մտքերը աւելի ևս զբոսնում
կը լինեն: Արմատականները հաւանութիւն են
յայտնում կառավարութեան վարմունքին, ասե-
լով, որ նրա եռանդը պաշտպանութիւն կը գըտ-
նի բոլոր հանրապետականներին կողմից, բայց
պէտք է շուտով վերջ տրվի այդ դատադրու-
թեան գործին:

ՊԱՐԻՑ: «Temps» լրագրին հաղորդում են
Բէնիլից, թէ դատարանի երէկվայ նիստի պատ-
ճառով, Կէմանի և Լաբորի վճռել են վկայ
կանչել Ֆրէյսիէն և Ժամմին, որոնց Մերսիէ
խառնեց գործի մէջ:

Ձը նայելով մի քանի թերթերի հաղորդած
լուրերին, Մարսէլ Գամբէր դեռ չէ ձերբա-
կալված:

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՆՈՒՄ Ե

ԱՐԾՈՒՄԱԿԻ ԳԻՒԳ. Ե. Մ.—Ե.—ին: Ձեր
յօշուածը չի տպւի:
ԲԱԳՈՒՄ. Մ. Անտոնեանցին: Բարենաճեցէք
յայտնել ձեր նախկին մանրամասն հասցէն:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒԶԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻՔ-ԱԳԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԻՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՂԻ

№ 1 գնացքը:	№ 3 գնացքը:
Բաղուէց գուրս է գալիս ցեր. 4 ժ. 15 ր.	գեր. 12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում առ. 8 ժ. 40 "	եր. 6 " 38 "
Թիֆլ. գուրս է գալիս " 9 " 10 "	եր. 7 " 37 "
Բաթում է հասնում " 8 " 32 "	առ. 8 " 12 "

№ 2 գնացքը:	№ 4 գնացքը:
Բաթումից գուրս է գալիս առ. 9 ժ. 15 ր.	եր. 9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում " 8 ժ. 53 "	առ. 9 " 45 "
Թիֆլիսից գուրս է գալիս " 9 " 23 "	" 11 " 32 "
Բաղուէ է հասնում " ցեր. 1 " 04 "	" 6 " 15 "

Դ Ի Լ Ի Ս Ե Ն Ե Ր

Հին և հոգու համար
Թիֆլիսից գուրս է գալիս 7 ժ. առ. 9 ժամ. առ. 9 ժամ. առ.
Վրէժուէ է հասնում " 11 ժ. 20 ր. 9 ժ. 20 ր. 9 ժ. 20 ր.
Վրէժուէից գուրս է գալիս (չեն գրելու) 9 ժ. 20 ր. 9 ժ. 20 ր.
Թիֆլիսից գուրս է գալիս 1 ժ. ցերեկ. 7 ժ. ցերեկ.
Վրէժուէից գուրս է գալիս 3 ժ. 25 ր. 9 ժ. 50 ր.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱԳԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
մութեան, վնասակար (սիֆիլիս) և միզաուեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդալիս հ.

Ձ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11—12 ժ. կանանց
հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և
երեսայն հ.

Ա. Գ. ԳՈՐԿԻՆ—1½—2 ժ. ներքին և միա-
սեռական հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԻՔԻ—6½—7½ ժ. վերա-
բուժական հ.:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7½—8 ժ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ Տիւնիզիայից քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէլի, խիստ արեւան, կաթի և ալի:
Վճար 50 Կ. չաւորները ձրի: Համախորհրդի
(կոմիտէի) և օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. ԱՌԱՎԱՆԻՏԻ—պարագուս է տանը
ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամար-
դութեամբ և մարզելով. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերաբերում:

12—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Տեղափոխելով Թիֆլիսից Եւզի, բացել եմ
ԿԱՐՈՒ ՁԵՒԻ ԵՒ ՁԵՆԱԳՈՐԾԻ

ուսումնարան, որտեղ ընդունում եմ աշակեր-
տութիւնը սովորեցնելու համար: Նոյնպէս ըն-
դունում եմ ամեն տեսակ պատուէրներ:
Բուլվարայա փողոց, տուն Ստեփան Սարգի-
սեանցին:

Տիֆլիս Սօփիա Հայրապ. Ղահրամանեանց
6—10

ԲԺԻՇԿ Զ. Յ. ՂՕԿԻՆԵԱՆ

Ընդունում է՝ վնասակար, ախտական, մեղ-
թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին:

Առաւօտեան 9—12 ժամը

Երեկոյեան 5—7 ժամը:

Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Ե. հ. շ.) 58—100

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԵՐՅՖԵԼԴ

Մադրեան փողոց, № 5.

որ մասնագէտ է կաշու, միզասեռական (ե-
րկտրականութեամբ), վնասակար և սիֆիլիսի
հիւանդութիւններին:

ՎԵՐԱԳՈՐԴԱՆՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.

Երեկոյեան 5—8 ժ. 18—60

Ներսիսեան հայոց հոգեւոր
դպրոցի վարչութիւնը

Սրանով յայտարարում է, որ դպրոցում
վերանորոթիւնները սկսվելու են օգոս-
տոսի 26-ին, իսկ նորեկ աշակերտներին
ընդունութիւնները օգոստոսի 30-ին: Բ. և Գ.
պատրաստականների և I դասարանի հա-
մար ընդունելութիւն չի լինի, տեղ չը
լինելու պատճառով:

ՀԱՊԱԼԱՍԻ ԶԻԹ
(Блокчейнъй Экономъ)

Բ. ԿԵՐԵՒԻ ԵՒ ԸՆԿ. ՄՈՍԿՎԱՅԻ

ընկերութեան գործարանից: Տալիս է բո-
լորովին պարզ, գեղեցիկ գոյնի և հոտի
լամիչը: Մախվում է

ԱՄԵՆ ՏԵՂ. ԵՒ ԲՈՒՈՐ յայտնի վաճա-
ռականների մօտ: Մ. 75287 (13)

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՅԻ
Վ. Յ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Միջայեան փողոց, տ. № 93. տէլ-
ֆոն № 506: (հ.) 32—45

Ֆինանսների միևիուրի քոչուուրեամբ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова).

Կուրսերի նպատակն է տալ ունիդիւններին մասնագիտական-առևտրական կրթութիւն
և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուղթանութիւն և թուղթանութիւն համբիլի
վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բան-
կային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական անտեսագիտութիւն, 5) Առև-
տրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղարդութիւն և արագագործիւն (ուղղում
ձեռագրի):

ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԸ ՍԿՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ից:

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և եղբ. Ծովանեան և Բնկ.
ԲԱԳՈՒԻ Բաժանմունքում: Օտարաբարաբայի ունիդիւնների յարմարութեան համար
Կուրսերում ընդունվում են գիշերօթիկներ: Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և
մանրամասն ծրագիրը—տրվում են և ուղարկվում են ձրիաբար: Օտարաբարա-
բայիները դիմում են՝ БАНУ, учредителю коммерческихъ курсовъ А. Н. Теръ-Ованесовау,
(Ե. շ.) 9—25

Եղբարք Ե. և Մ. Միրզաբեկեանցների

ԾԽԱՆՈՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱԳՎՈՒՄ

Ի նկատի առնելով, որ տարեց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը
գնալով մեծանում է, մենք, որպէս զի դիւրութիւն լինեց տուած մեր ժողովրդին՝ վրձ-
նեցինք Թիֆլիսում (Հաւաքարի կամուրջի մօտ, տուն Իսաբովի) բանալ սեփական խանութ, որ-
տեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաբարձր տեսակները: Շնորհիւ այդ
պահանջի, մենք հնարաւորութիւն ունենք ամենաբարձր պապիրոսներ և ծխախոտը ծախել աւելի
էժան գներով:

Օտարաբարաբայի իրանց պատուէրներով դիմում են՝ Тифлисъ, табачный магазинъ
Бр. Мирзабековъхъ.

Պատուէրները կատարվում են ճշգրտեամբ և շուտ:

2—10

ՀԱՅԹԱՅՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ՊԱԼԱՏԻ

Ա. ԲԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.
ՄՕՍԿՎԱ.

ՕՏԱՆԵԼԻՔ
ՐՕԵԱԼ-ՐԱԼԼԷ

Հոտաւէտ ջրեր, սապոն և պոզրա
ԾԱՂԿԱՅԻՆ ՕՏԱՆԵԼԻՔ
ՀՈՍԱԻՏ ՋՐԵՐ, ՍԱՊՈՆ և ՊՈՒԴՐԱ 6 հոտով.
Շուշան, Խառաման, Բեզլա, վիճակ, պաշտի, դեղորայք.
3 ԱՌԱԿԱՅԻՑ ԲԱԿԱՑՈՒՄ ԲԱԳՎՈՒՄ 2 ԲՈՒՐԻՆ:
МОСКВА, 1) Пассаажъ Солодовникова. 2) Тверская,
д. Спиридонова.
С.-ПЕТЕРБУРГЪ, Невскій, 18. М. 59806
Նախ Ռուսաստանի յայտնի գեղատնեւրում:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նաղաւայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած
աշակերտներ և աշակերտութիւններ, թող բարենաճեն դիմել կուրսերի հիմնոյն, Ս. Մանուէլեան-
ցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնա-
րանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ:
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովանեանցների բան-
կային գրասենեակում և կուրսերի հիմնովի բնակարանում: Օտարաբարաբայիները դիմում են՝
ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцъ. (Ե) 6—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-іe

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մայիսից Տրապիզոն, Սամսուն և Պոլս: Մեկնում է Բաթում-
մից՝ չորեքշաբթի, (4/16 օգոստոսի) ՄԻՆԳՐԵԼԻ չորեքշաբթի, նաւապետ ՇԵԼԸ: Եւ այսպէս
շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարները տրվում են սովորականից
պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտիպէրպէնի մէջ, ընդունե-
լով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարենաճեն դիմել ընկերութեան գործակաւորներին:

ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԳԱՐՍԻՆ, Նաբէլ-Մայա: ԹիֆլիսՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիւնի փող. Թօլափարովսովի և Մայաուրաձի ջարվաստար: ԲԱԳՈՒ—Եղբ. Վ. և Մ. Սոթա-
ֆեաներին, Նաբեբեժնայա փողոց, տուն Կրասիւնիովի, № 27: ՆՕՎՈՐՈՍՍԻՅՈՎ—պ. Մելիքի
Հերշեմբոգերին: (Ե. հ. շ.) 5—20

Խորհուրդ եւր տալիս հեռատեսերին

Վերայում, արտիլերիան բանակներին, և Գողթիստի լուցիլի գործարանի մօտ,
Մուշտարիզի հանդէպ, Կուր գէտից մօտ, ծախվում են մաս-մաս հոդեր:

Մինչև օգոստոսի 10-ը:

ՍԱԺԵՆԸ Յ ԲՈՒՐԻ 50 ԿՂԵԿ

Ցանկացողները թող դիմեն՝ Ջանջուղադեանի խանութ, Գօլովինսկի պրօսպէկտ,
տուն Ջուրալովի: (3, 5) 1—2

HUILE d'OLIVE BESSEDE

Իսկական պրօվանսալի իւղ ԲԵՍԵԴԵ, բոլորովին մաքուր, առողջ և ամենալա-
տեսակից: Խնդրում են չընդունել այնպիսի շիշեր, որոնց զրոյմները վնասված են կամ
չունեն ստորագրութիւն: Ձգոյշ կենալ կեղծումից, որոնք աշխատում են նմանացնել
զրոյմը կամ շիշի ձևը: Իսկական ԲԵՍԵԴԵ իւղը, Մարսէլիայից (Ֆրանսիա) վաճառվում
է ամեն տեղ:
M. 49812 10—12